

Հարցաշար
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան – 180 րոպե

Ապերասան քամին, բերանն առած միանման ծառերի երկու սերմ, փոքր-ինչ հանգրվանեց անտառի լուսափթիթ բացատում: **Պարարտ** հողում հայտնված սերմերը շուտով ծլարձակեցին: Շիվերից մեկն սկսեց արագորեն աճել, և շուտով դարձավ **հուռթի** սաղարթներով **գեղուղեջ** ծառ: Անցորդներին տեսնելիս ծառը հաճելի սոսափյունով օրորվում էր, **պչրանքով** ցուցադրում իր գմբուխտե զգեստը:

Իսկ մյուս տունկը, որ ընդամենը մի քանի ընձյուղ էր արձակել, աճում էր դանդաղ, առանց շտապելու:

Մի օր գեղեցիկ ծառը, **քամահրանքով** նայելով ընկերուհուն, ասաց.

- Տե՛ս՝ որքա՛ն **զգլխիչ** տեսք ունեմ: Ինչո՞ւ դու էլ չես զուգվում, չես փորձում ինձ պես գեղեցկանալ, փարթամ սաղարթներ ունենալ:

Ի պատասխան՝ ցածրահասակ ծառն **անբարբառ** շրջեց ճյուղերը:

Քիչ անց քամին ներխուժեց անտառ ու սկսեց իր **խելահեղ** պարը: Չղիմանալով քամու պտույտներին՝ ինքն իրենով գնալվող գեղասաղարթ ծառը միանգամից ճկվեց և որպեսզի չտապալվի, հենվեց աներեր կանգնած հարևանուհուն:

- Դու, որ անշուք ես, անսաղարթ, ինչպե՞ս դիմակայեցիր քամուն, իսկ ես, որ այսքա՛ն հմայիչ եմ, չկարողացա կանգուն մնալ, - վրդովված հարցրեց գեղեցկուհին:

- Մինչ դու զարդարվում էիր, ես արմատներս էի խորացնում, ... պատասխանեց **շրջահայաց** ծառը:

1. Շարունակիր՝ տեքստի անավարտ նախադասությունը: (1 միավոր)
2. Մեկնաբանի՛ր առակի իմաստը: 2-3 նախադասությամբ բնութագրի՛ր առակի հերոսներին: (4 միավոր)
3. Գրի՛ր տեքստում ընդգծված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Տեքստից դո՛ւրս գրի՛ր տարատեսակ դերբայներով դերբայական դարձվածների չորս օրինակ՝ նշելով յուրաքանչյուրի շարահյուսական պաշտոնը: (2 միավոր)
5. Տեքստից դո՛ւրս գրի՛ր պարզ և բաղադրյալ ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալների երկուական օրինակ՝ նշելով եղանակն ու ժամանակը: (2 միավոր)
6. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր. « Ոչ միայն հացի կեցցե մարդ»:
(2 միավոր)
7. Ի՞նչ է նշանակում «*Դիողինեսի լսպտեր*» թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Մտորումներ ճանապարհից առաջ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)

Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի առաջադրանքների

Պատասխաններ

9-րդ դասարան

2. Մարդիկ այնքան են տարվում իրենց արտաքինով, որ ժամանակ չեն տրամադրում ինքնագարգացման, գիտելիքի համար, և կյանքի կտրուկ փոփոխությունները նրանց կանգնեցնում են լուրջ խնդիրների առաջ: Պետք է պատրաստ լինել հաղթահարելու ցանկացած խոչընդոտ:

3. ապերասան - անսանձ, սանձարձակ, սանձակոտոր, անգուսպ
պարարտ – այստեղ՝ բարեբեր, արգավանդ, բերրի, բեղուն, արգասաբեր, պտղաբեր
հուռթի – այստեղ՝ փարթամ, առատ
գեղուղեշ – գեղասաղարթ, գեղեցիկ ճյուղերով, գեղեցիկ ճյուղեր՝ սաղարթներ ունեցող
պչրանք – սեթևեթանք, նազանք, ծեքծեքանք, կոտրատվելը
քամահրանք – արհամարհանք, անարգանք
զզլիխիչ – հմայիչ, դյուրիչ, գլուխը պտտեցնող
անբարբառ – անձայն, անխոս, լուռ, առանց ձայն հանելու
խելահեղ – խելագար, մոլեգին
շրջահայաց – խելացի, ողջախոհ, ողջախոհ, հեռատես, հեռուն մտածող

4. *բերանն առած միանման ծառերի երկու սերմ* – հարակատար, ձևի պարագա,
պարարտ հողում հայտնված, աներեր կանգնած – հարակատար, որոշիչ,
անցորդներին տեսնելիս – համակատար, ժամանակի պարագա,
քամահրանքով նայելով – անորոշի գործիական, ձևի պարագա,
ինձ պես գեղեցկանալ, փարթամ սաղարթներ ունենալ – անորոշ, ուղիղ խնդիր,
չդիմանալով քամու պտույտներին – անորոշի գործիական, պատճառի պարագա,
ինքն իրենով զմայլվող – ենթակայական, որոշիչ,

6. Մարդը ոչ միայն հացով է ապրելու:

7. Իսկական մարդ կամ արժեք փնտրելու-գտնելու միջոց, ծագումը. Դիոգինես
Սինոպացին, լապտերը ձեռքին, շրջում էր փողոցներով և մարդ փնտրում:

Գնահատման չափանիշներ

9-րդ դասարան

3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 5 միավոր:
(Եթե շարահյուսական պաշտոնը սխալ է նշված՝ 0,1 միավոր):
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 25 միավոր:
(Եթե սխալ է նշված եղանակը կամ ժամանակը՝ 0,1 միավոր):
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
(Եթե սխալ է մեկնաբանված՝ 0,25 միավոր):

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: